ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 340
04 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 2 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30 » նոյեմբերի 2017 թվականի N 111

ՌԱԶՄԻԿ ՄԱՑԱԿԻ ԱՐԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՕ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռազմիկ Մացակի Արամյանի ընտանիքին հատկացված 2-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող տնամերձ հողամասը, 0009-0025 ծածկագրով բնակելի տնով :1999թ. քարտեզագրման ժամանակ 0009-0025 ծածկագրով հողամասը թյուրիմացաբար գրանցվել է 0,06հա մակերեսով, որը և գրվել է N 0177084 սեփականության վկայականում,սակայն նշված հողամասը իր կողային չափերի մեջ կազմում է 0.1094հա ուստի նրա կողմից ավել օգտագործվող 0.0494հա հողամասը չի գտնվում 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ և նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար ***որոշում եմ***.

1. Ճանաչել Ռազմիկ Մացակի Արամյանի սեփականության իրավունքը ըստ քարտեզում և հատակագծում նշված կողային չափերի արդյունքների, 0009-0025 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0494հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2.Կատարել համապատասխան ուղղում ըստ գեոդեզիստ քարտեզագրողի կողմից ներկայացված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. նոյեմբերի 30
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» դեկտեմբերի 2017 թվականի N 112

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մրգաշեն համայնքի ղեկավարի 2016 թվականի փետրվարի 12-ի «Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 4 որոշման թիվ 1 հավելվածի 7-րդ մասի խզ – ը կետից հետո լրացնել ծ – ը կետը.

«Օրենքով սահմանված կարգով համայնքում իրականացնում է հուղարկավորությունների կազմակերպմանն ու գերեզմանատների ու դիակիզարանների շահագործմանն ուղղված գործառույթներ »:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 01
գ.Մրգաշեն